Արձանագրություն N 3
Ուղեփակոցի ձեռքբերման «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/52» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 03.05.2019թ.
Ժամը՝ 11:20

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ներսիսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Մաթևոսյան /գնահատող/, Ե. Բազեյան /գնահատող/
Վ. Մինասյան /բացող/, Ա. Մելիքսեթյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված եզրակացության մասին

(Ս. Ներսիսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է գնման առարկայի իր կողմից առաջարկված տեխնիկական բնութագիրը:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ մասնակցի կողմից ներկայացված բնութագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես, բնութագիրը ներկայացված է ոչ ամբողջական, բացակայում են հիմնական պահանջները:

1.3 Գնահատող հանձանաժողովը հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետի պահանջը՝ որոշեց ծանուցել մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ս. Ներսիսյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 08.05.2019թ., ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Ս. Ներսիսյան

Անդամներ՝ ---------- Ե. Մաթևոսյան

---------- Ա. Մելիքսեթյան

---------- Ե. Բազեյան

---------- Վ. Մինասյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան